Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում

«Հմտություններ՝ բիզնեսի համար». Միջին մասնագիտական կրթությունը՝ որպես կայուն տնտեսական զարգացման նախապայման

Պատվիրատուներ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման և միջազգային համագործակցության նախարարություն, Եվրոպական Միություն (ԵՄ)

Գործընկերներ՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ազգային, տարածքային և ոլորտային մակարդակներում գործող կառույցներ, բիզնես միավորումներ, բիզնես ծառայություններ մատուցող կազմակերպություններ, առանձին ընկերություններ

Տևողությունը՝ 04.2017-04.2020

Բյուջե՝ 14.08 մլն. եվրո (ներառյալ՝ 1.98 մլն եվրո, որ համաֆինանսավորման կարգով հատկացվում է ԵՄ-ի կողմից)

Երկրներ՝ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան

Մեր մոտեցումը

Փորձի փոխանակման տարածաշրջանային ակադեմիաները ծառայում են որպես հարթակ՝ առանձին ոլորտներում ուսուցման, փորձի փոխանակման համար և նպաստում են համատեղ նախագծերի շուրջ՝ ազգային, տարածաշրջանային և ոլորտային մակարդակներում շարունակական համագործակցությանը: Փորձագիտական տեսակետների փոխանակման գործընթացում, թեմատիկ աշխատաժողովներում և գիտակրթական նպատակով իրականացվող այցելություններում ներգրավված էին գործընկեր կազմակերպությունների շուրջ 80 ներկայացուցիչներ՝ հարավկովկասյան երեք հանրապետություններից: Համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել է միասնական գործողությունների ծրագիր, որն ուղղված էր բարելավումների իրականացմանը: Նախատեսված միջոցառումներն այնուհետև իրականացվել են մասնակից երկրներից յուրաքանչյուրում: Փորձի փոխանակման տարածաշրջանային ակադեմիաների ուշադրության կիզակետում մասնավոր հատվածի զարգացմանը և միջին մասնագիտական կրթությանն առնչվող հետևյալ երեք հեռանկարային թեմաներն են. (1) ընկերությունների և արժեշղթաների կայուն կառավարում, (2) դուալ միջին մասնագիտական կրթություն և ուսուցում, (3) նորարարության և կլաստերների ձևավորման խթանում: Այս ջանքերը ոչ միայն խթան հանդիսացան մասնավոր և հանրային հատվածների միջև համագործակցության համար, այլև նպաստեցին տարածաշրջանային և ոլորտային մերձեցմանն, ինչպես նաև միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Մարտահրավերները

Հարավկովկասյան հանրապետությունների ամենաարդիական մարտահրավերներից է համընդգրկուն աճի ապահովումը, որի արդյունքում հնարավոր կլինի կրճատել այն անջրպետը, որ առկա է քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև և նվազեցնել աղքատության ռիսկը՝ հատկապես գյուղական վայրերում: Աշխատաշուկայի տեսանկյունից հեռանկարային այնպիսի ոլորտներում, ինչպիսին է զբոսաշրջությունն ու գինեգործությունը, աճը խթանելու համար չափազանց կարևոր է հմուտ աշխատուժի պատրաստումը, որը կհամապատասխանի աշխատաշուկայի պահանջներին: Վերը նշված նպատակին հասնելու նախապայմաններից է մասնավոր հատվածի ավելի ակտիվ ներգրավվածությունը և գործնական աշխատանքի վրա հիմնված միջին մասնագիտական կրթության ապահովումը, ինչը դեռևս առկա չէ:

Նպատակը

Նպատակն է բարելավել կայուն տնտեսական աճի համար անհրաժեշտ նախապայմաններն այն ոլորտներում, որոնք էական նշանակություն ունեն զբաղվածության ապահովման տեսանկյունից: Շեշտը հատկապես դրվում է տնտեսության այն ճյուղերի վրա, որոնք մեծ նշանակություն ունեն գյուղական վայրերում, ինչպես նաև կանանց և երիտասարդների համար աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից:

Գործողությունները

Ծրագրի գործողությունների հիմքում տնտեսության առանձին ճյուղերն են ու գործունեության հետևյալ երեք ոլորտները. 1) կարողությունների զարգացում, որոնք կարող են բարելավել աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից հեռանկարային ոլորտների մրցունակությունը՝ համընդգրկուն բիզնես մոդելների խթանման միջոցով, 2) դուալ կրթական համակարգի տարրեր պարունակող միջին մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերի խթանում 3) մասնավոր հատվածի զարգացմանը և դուալ կրթության համակարգին առնչվող միջազգային և տարածաշրջանային փորձի փոխանակում: Ուշադրության կենտրոնում ՓՄՁ-ների հզորացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացումն է, ինչպես նաև ծառայությունների մատուցման և տեխնիկական ոլորտներում միջին մասնագիտական կրթական ծրագրերի որակի բարելավումն է: Խրախուսվում է ոլորտային համագործակցությունն, ինչպես նաև կլաստերների/ցանցերի ձևավորումը՝ տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների, բիզնես շրջանակների միջև ավելի ամուր կապեր ստեղծելու նպատակով:

Implemented by:

Հրապարակված է

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից

Գրանցված գրասենյակներ՝

Բոնն և Էշբորն, Գերմանիա

GIZ Հարավային Կովկասի գրասենյակ

Ռուսթավելի պող. 42/ Գրիբոյեդով 31ա

0108 Թբիլիսի, Վրաստան

Հեռ.՝ +995 32 2201800

Էլ.փոստ՝ giz georgia@giz.de

Կայք՝ www.giz.de

GIZ հայաստանյան գրասենյակ

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան

Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ +374 (0) 10 58 93 37

Էլ.փոստ՝ giz armenia@giz.de

Կայք՝ www.giz.de

Պատասխանատու՝ Կառլ Ֆ. Թեսթենսեն, Աննե Քեմփա

Ձևավորում և էջադրում՝ Բատաշ ստուդիո

Նոյեմբեր 2017

Մեր ներդրումը Հայաստանում

«Հմտություններ՝ բիզնեսի համար». Միջին մասնագիտական կրթությունը՝ որպես կայուն տնտեսական զարգացման նախապայման

Պատվիրատուներ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման և միջազգային համագործակցության նախարարություն, ԵՄ

Գործընկերներ՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, այլ նախարարություններ, ազգային, տարածքային և ոլորտային մակարդակներում գործող կառույցներ, բիզնես միավորումներ, բիզնես ծառայություններ մատուցող կազմակերպություններ, առանձին ընկերություններ:

Հայաստանում իրականացված գործողությունների օրինակ

Գերմանիայի Գայզենհայմի համալսարանի ու Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) համագործակցության արդյունքում Հայաստանում առաջին անգամ մշակվեց գինեգործության և գինարտադրության ուսումնական ծրագիր: 2017 թ-ի ամռանն ուսումն ավարտեց ուսանողների առաջին սերունդը, և 32 շրջանավարտներից յուրաքանչյուրն էլ իր տեղը գտավ աշխատաշուկայում:

18 ամիս տևողությամբ ուսումնական այս ծրագրի նկատմամբ մեծ պահանջարկի արդյունքում արդեն իսկ գրանցվել է 29 նոր մասնակից: Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի» (ICARE) նոր հիմնադրված գինեգործական լաբորատորիայի միջոցով ուսանողները ծանոթանում են նորագույն տեխնոլոգիաներին: Այսպիսով, ստեղծվել է նորարարական ուսումնական ծրագիր՝ արտահանման ուղղվածություն ունեցող մի ոլորտում, որն օժտված է նաև Հայաստանում աճի ու կայուն զբաղվածության ապահովման ներուժով:

Մասնավոր հատվածի զարգացում

» Գեղարքունիքի ու Վայոց Ձորի՝ որպես տուրիզմի զարգացման ներուժ ունեցող մարզերում, մի շարք կազմակերպություններ մշակել են զբոսաշրջության խթանման ռազմավարություններ: Այդ աջակցության արդյունքում՝ նորաստեղծ և արդեն իսկ գործող քսան փոքր ձեռնարկություններ բարելավել են առաջարկվող ծառայությունների որակը:

» Հայկական գինեգործական 6 ընկերություն ստացել է միջազգային ստանդարտների ներդրմանը, որակի կառավարման ու սննդի անվտանգության ապահովմանն ուղղված խորհրդատվական օժանդակություն: Եվս յոթ կազմակերպություն օգտվում է գինեգործության ոլորտում բոլորովին վերջերս ներդրված ծառայություններից:

» Mundus Vini համաշխարհային մրցույթին ներկայացած բոլոր 6 ընկերություններն արժանացել են ոսկե կամ արծաթե մեդալի:

» «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագիրը հզորացնում է ձեռներեցությանն աջակցող կազմակերպությունների միավորման արդյունքում ստեղծված երկու կոնսորցիումների կարողությունները: Ծրագիրն աջակցել է նաև բիզնես խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով երկու առցանց հարթակների ստեղծմանը: Ավելին, շուրջ 120 նորաստեղծ ընկերությունների (սթարթափերի) ներկայացուցիչներ անցել են համապատասխան վերապատրաստում՝ ստանալով բիզնես աջակցություն Սալամանկայում (Իսպանիա) անցկացված Startup Ole միջոցառման, ինչպես նաև ուսումնական ճամբարների (Boot Camp) և Սևան Սթարթափ Սամմիթի շրջանակներում:

Միջին մասնագիտական կրթություն

» Միջին մասնագիտական կրթության ոլորտում ընթացող բարեփոխումներով սահմանվել են 2017-2021 թթ համար նախատեսված գործողությունները, որոնց նպատակն է մշակել պահանջարկի վրա հիմնված ուսումնակրթական ծրագրեր (օրինակ՝ զբոսաշրջության և գինեգործության ոլորտներում):

» Երեսուն հայ զբոսավարներ մասնակցել են միջազգային ուսումնական ծրագրին՝ ստանալով Զբոսավարների համաշխարհային ֆեդերացիայի հավաստագրեր:

» Միջին մասնագիտական ուսումնական հաստությունների 12 դասախոս և 65 ուսանող մասնակցել է բիզնես կառավարման և ձեռնարկատիրությանը նվիրված դասընթացներին: Հրատարակվել են նաև սեփական բիզնեսի հիմնման խնդիրներին նվիրված երկու ձեռնարկ, վերանայվել ու լրամշակվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական պլանները:

Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում

» Սիրիայում ծայր առած պատերազմի հետևանքով շուրջ 16.000 հիմնականում հայկական ծագում ունեցող սիրիացիներ, որոնք 2012 թ-ից ի վեր ստիպված էին լքել երկիրն, աջակցություն են ստանում հայաստանյան տնտեսության մեջ ինտեգրվելու, կարիերայի զարգացման և ֆինանսական միջոցների ձեռքբերման նպատակով: Հայաստանում ապաստան գտած փախստականներին անհրաժեշտ աջակցությունը տրամադրվում է բազմաշահառու երկխոսության, ինչպես նաև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի և այլ դերակատարների համատեղ աշխատանքի միջոցով: Գերմանական խնայբանկերի հիմնադրամի (SBFIC) և Գերմանական տնտեսական միավորման (DWV) հետ համագործակցության արդյունքում, ծրագիրն իրականացրել է 2800 սիրիահայերի վերապատրաստում: 200-ից ավելի ձեռնարկատերերի տրամադրվել է աջակցություն՝ իրենց արտադրանքը 12 հայաստանյան և միջազգային ցուցահանդեսներում ներկայացնելու նպատակով:

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by: giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Արդյունքներ

Բիզնես ծառայություններ մատուցող 26 կազմակերպություններ (օր. առևտրաարդյունաբերական պալատներ, բիզնես զարգացման ասոցիացիաներ), ավելի քան 1500 ընկերությունների առաջարկում են նոր կամ բարելավված ծառայություններ (ինչպիսին են խորհրդատվությունը և դասընթացները)՝ արձանագրելով պահանջարկի աճ:

Հայաստանում և Վրաստանում ՀԶԿ Եվրասիական մրցունակության ծրագրի հետ համագործակցությամբ և բիզնես ասոցիացիաների մասնակցությամբ մշակվել են ՓՄՁ զարգացման ռազմավարություններ: Վերոնշյալ փաստաթղթերի համար հիմք են ծառայել կոնկրետ վերլուծությունները:

Մատուցվող ծառայությունների որակի բարելավման և համատեղ մարքեթինգային ռազմավարությունների արդյունքում երեք հանրապետությունների տուրիստական հինգ շրջաններում արձանագրվել է շուրջ 400 գերփոքր և փոքր ձեռնարկությունների շրջանառության, ինչպես նաև գիշերակացն անցկացնողների թվի աճ:

Առանձին արժեշղթաներում ներգրավված ընկերությունների 70 % -ում, որտեղ ներդրվել են նոր կամ բարելավված կառավարման մոդելներ, արձանագրվել է բիզնես արդյունավետության աճ:

467 որոշում կայացնողներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսներ Հարավային Կովկասից անցել են վերապատրաստում՝ կառավարման, մանկավարժության, դուալ կրթական համակարգի բնագավառում:

Հարավային Կովկասի 147 ուսումնական հաստատություններ առաջարկում են 46 նոր կամ պահանջներին համապատասխանեցված մասնագիտական որակավորումներ (օրինակ՝ եռակցող արհեստավոր, խոհարար, գինեգործ):